


Տարեկան գին 8 ՄԶԸ.
Վեցամսեայ 4 ՄԶԸ.
Չամսեայ 3 ՄԶԸ.
Չորսամսեայ 2 ՄԶԸ.
Չամսեայ 1 ՄԶԸ.



ՀԱՅԿԱՍՏԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ 12 ՅՈՒՆԻՎԱՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ռուսաց կիրակի օրն Ագրիանու պոլիսը գրաւած ըլլալուն զրոյցն հաստատութիւն դառաւ Ծառերկու վաշա հետեակ և երկու վաշա հեծեալօր Ագրիանուպոլիս մտեր են և կայսերական կառավարութիւնը պաշտօնական աղբ մը հրատարակելով կ'Պօլսոյ ժողովրդեան միտքը կը հանդարտեցնէ, չափազանց և սուտ զըրոյցները կը հերքէ, և կը ծանուցանէ թէ վրդավիշ լուրեր տարածող անձինք պաշարման փնտրելի օրինաց համեմատ զինուորական ատենին մ'առջեւ դատուելով պիտի պատժուին և Ռուսը ալ Ագրիանուպոլսոյ մէջ յայտարարութիւն մը հրատարակելով հասարակութեան սիրտն ապահովելու են և երեքշաբթի իրիկուն կըսուէր թէ զինադուր կնքուած է, սակայն այս զրոյցին ստուգութիւնը մինչև երէկ իրիկուն հաստատուած չէր: Ծառերկու օրն հաւարակայ խորհրդաւանին մէջ խօսելով ըսաւ թէ հաշտութեան պայմանները տակաւին մինչև այն ատեն Անգլիոյ կառավարութեան հասած չէին, բայց վայրկեանէ վայրկեան կ'ապաստուէին և Նախարարն յարեց սակայն թէ լրագրաց ոմանց ծանուցած պայմաններն անըստոյգ կամ չափազանց էին:

Յիշեալ լրագրաց ծանուցած պայմանաց մէջ նշանակութեան արժանի է հիւսիսային Գերմանիոյ կողմէ լըրագրին Բեդերսպոլցէն գրուած նամակի մը պարունակութիւնն: Այն նամակը Բեդերսպոլցի մէջ եղած խօսակցութիւններն համապատասխան կըսէ թէ Անգլիոյ Օսմանեան կառավարութեան բաղձանքը Ռուսիոյ հաղորդելով Պէրլինի յիշատակագրին հաւանութիւն տուաւ, ուստի կը յուսացուէր որ Պէրլինի յիշատակագրին վերադառնալ հարկ պիտի ըլլայ, որ ինչպէս յայտնի է հիւսիսային երեք մեծ տէրութեանց ստորագրութիւնը կը կրէ: Պէրլինի յիշատակագրին Ռուսիոյ պահանջմանց նուազագոյնը կը ներկայացնէ՝ զուցէ Ագրիանուպոլսոյ և կարնոյ գրամամբ: Թուրքիայէն պիտի պահանջուի որ կալուածական օրէնքը բարեկարգի, դատարանները վերակազմուին, կտակի ազատութիւնն յարգուի, քրիստոնէիցի վիճակը բարեօրէն միջոցներ ձեռք առնուին: Ասոնց ամենքն ալ Պէրլինի յիշատակագրին մէջ նշանակուած են և բայց ասոնց հետ 'ի միասին պա-

տերադմական տուգանք պիտի պահանջուի երեք: Իբրև հետեանք ներկայ պատերազմին՝ Բ. Դրան հպատակ իշխանութեանց ոմանց անկախութիւնը պիտի հրատարակի (թէ և Անգլիոյ Սերիկոյ անկախութիւնը ծանշելու հաւանութիւն չտար): Ռուսիոյ հողային փոխարկութիւնն ալ պիտի պահանջէ, և Եւրոպական թուրքիոյ մէջ փոքրիկ նոր իշխանութիւններ պիտի հաստատէ՝ Եւրոպական տէրութեանց պաշտպանութեան ներքեւ դնելով:

Ռուսիոյ այս բոլոր պահանջումները նոյն հաստատամտութեամբ պիտի ներկայացնէ երեք, որով պատերազմի ձեռնարկած է, հետեւաբար ո՛չ դեռ պահանջուող հարկեր և ո՛չ դեռ պահանջուող ծանուցագրեր չպիտի կրնան զինքը կատարել իւր գործէն: Ռուսիոյ չը պահանջեր որ Գերմանիոյ խաչը Ս. Սօփիոյ վրայ հաստատուի, թէ և ամեն Օրթոտոքս Ռուսաց երազած բաղձանքն է այս. սակայն խոստ և Բերլինիոյ հպատակաց կրօնական, քաղաքային, դատական և ընկերական հաւատարմութիւնը պիտի պահանջէ, որոյ համար եթէ տասն տարի ալ պէտք ըլլայ պատերազմի, 'ի փոխդ' նոյն իսկ Անգլիական "սուրբ բաղնիստ" չափուց, Ռուսիոյ բընաւ չպիտի խորշի երեք: Ռուսիոյ հարկատու երկիրներուն վրայ աղբեցութիւն գործածել չուզէր: Մոլոտաւիա, Վալաքիա, Պոլսոյ Կարիա, Սերբիա միշտ մտադրուած էին և զոհոյցութեան առարկայ եղած են Ռուսիոյ, և անոր ըրած ջանքի փոխարէն օգուտ չեն մատակարարած իրեն: Այս յայտարարութիւնն օտարները խաբելու համար մտածուած կերակ, քանզի չենք գիտեր թէ Ռուսիոյ նիւթական գործակցութեան և դաշնակցութեան աւելի ի՞նչ կրնար պահանջել Ռուսիոյ նիւթային, Սերբիայէն և այլն: Ստոյգ է որ ասոնք Ռուսիոյ ուղղակի հարկատու չեն, բայց գործիք և դաշնակցի ըլլալէ չեն դադարած, և այս նկատմամբ իրենց անկախութիւնը չկրնար զերենք Ռուսիոյ աղբեցութեան աղբաւ պահել: Կրնայ ըլլալ որ այս երկիրները Ռուսիոյ արեւելոս դաշնակցին. բայց եթէ միայն անոնց համար չափանալը կրակէն հանել պէտք ըլլար, դուցէ կուրքօ զօրավարը Պալքանկէն երկրորդ անգամ չանցնէր: Այս պատճառաւ Ռուսիոյ իրեն չահուն համար պատերազմական տուգանք պիտի պահանջէ: Եթէ Թուրքիոյ ցլետին չունչ պատերազմը ընել ուզէ, Ռուսիոյ ալ հաշտութեան պայմանները չափազանց պիտի ծանրայնէ և փարիզի դաշնագրութեան վերջին հարուածը պիտի տայ երեք, հետեւաբար յիշեալ դաշնագրութեամբ զՌուսիոյ նըւաւատայնելու համար Ռուսիոյ աղբ-

ւած Պատերազմի մասը Դանուբի Գիլիսի բերանին հետ 'ի միասին Ռուսիոյ վերադառնալը պիտի պահանջուի, և Ռուսիոյ ալ ուրիշ փոխարկութիւն մը տրուի: Բայց ո՛ւրէ՛կէ. այս կէտն ալ բանակցութեանց պիտի մնայ որոշել: Իսկ բանակցութեանց հետեանքն Եւրոպական դեռ պահանջուող մը պիտի ըլլայ, բայց ո՛չ կ'Պօլսոյ դեռ պահանջուող մը պիտի ըլլայ, որ Եւրոպական տէրութեանց ներկայացուցիչները պարզապէս ճանբուեցան: Դեռ պահանջներ երկրորդ անգամ չպիտի մեկնին երեք, մանաւանդ եթէ բանակցութիւններն Ագրիանուպոլսոյ մէջ տեղի ունենան: Կ'Պօլսոյ դեռ պահանջուող մը ին արձանագրութիւններն ոչ ևս պիտի կրկնուին: Այս ծրագրերը Ռուսիոյ պայմանաց վրայ դադարած մը միայն կրնայ տալ, բայց ճշդութեանն ոչ որ կրնայ երաշխաւորել, քանզի բանակցութիւնները շատ կէտեր կրնան փոփոխել և բոլորովին չափաւորել: Թըւնամին կրնայ իւր պայմանաց տուաւերեւոյն աստիճանը պահանջել: Բայց կայսերական կառավարութիւնն և Եւրոպական մեծ դեր պիտի խաղան, և յանդգնութիւն կը ըլլայ այժմէն իրենք իրենք նախագրութիւն:

Պատերազմական գործողութիւններն ամենայն սաստկութեամբ կը շարունակեն: Կառավարութիւնը մայրաքաղաքին մէջ կամուսները դուրսընտրու որոշում ըրաւ, որոյ համար ճէշտէթ փաշայի նախագահութեան ներքեւ յանձնախումբ մը կազմուած է: Ահմէտ Մուսթաֆա փաշա Չաթալճայի ամբարանաց հրամանատար կարգեցաւ: Սիւլէյման փաշան իւր բանակին միացորդով ֆիլիպէի կողմէն Տէտէ Ալաճի կողմը քաշուած է երեք և հապտեպով շոքեանաւեր ուղեր է զօրքը կ'Պօլսի փոխադրելու համար: Իւր բանակէն ֆերիզ Ֆուատ փաշան ալ Սէլանիկի կողմը քաշուել է երեք: Շիքալի մէջ Ռուսաց աւարներն են 28,000 դերի, 1000 ձի, 12 սանդ (հալան), 12 խոշոր թնդանոթ և 80 դաշտի թնդանոթ, 1200 անտուկ փամփուշտ, և 200 կառք լցուն ուղղմամբ երեքայն Նիքքա մեծ դուրքը կապովայն յունի: 11 թուով կը հեռաւոր թէ Բարսոֆ զօրավարին դուրսը Չաթիցա հասած էր: Քաթիցի կրկնէն անցնելով Սեծ դուրքը թէթանի մէջ Պալքարայ կողմէն համակրութեան ցոյցերով ընդունուեցաւ: 10 00 Օսմանեան դերի կային հոն, ուրիշ ալ աւելի հեռու պիտի զրկուէին: Այլ վիճէն մէկ ուրիշ հեռագիր մը կըսէ թէ կուրքօ զօրավարն յարձակմամբ գրաւած էր Մէջքա, Բէժէքէն և Իհթիման: Նիշի սուլան վրայ Պէլլիստի մէջ լուսաւաւութիւններ եղան և ցայգա-

հանդէս կատարեցաւ 'ի պատիւ Նախկին իշխանութեան և Ռուսիոյ հիւսպատու Պ. Բէրլինի: Նիշի մէջ Սերբիայի 130 թնդանոթ, 20-30000 նորահար հրացան և 3000 դերի աւելին: Օսմանեան զօրքը 6 օր դուրսընտրու Նիշը պաշտպանած էր: Գարատաղի կողմն Օսմանեան զօրքն հիմա Շքօտա կը գումարի երեք, ուր 42 քրուր թնդանոթ ամրացնելու վրայ դուրսած են: Անթիպարի մէջ Գարատաղիներուն առած աւարներն են 100 տակաւաշափ վառօղ, 15 թնդանոթ, բազում զէնք և զինք: 1400 ալ Օսմանեան զինուոր դերի ինկան: Անթիպարի 4000 բնակչաց և 200ի չափ վերադարձուց թշնամանք չեղաւ: Օսմանեան պատերազմական նաւերը Ալէք Փան Նաւահանգիստը քաշուեցան: Նիքիդա իշխանն ընքօտայի վրայ կը քաշէր, և Անթիպարի մէջ անձնատուր եղող Օսմանեան ուղայից զէնքն իրենց ետ տուած էր 'ի պատիւ իրենց քաշութեան: Յուսատանի մէջ յուզմունքը կը ծաւալէ: Կը վախցուի որ խոհանութեան խորհուրդներն 'ի բայ թողուելով պատերազմաւոր նախարարութիւն մը կազմուի:

Վերջին թղթագրով եկած էր Եւրոպական լրագրաց մէջ հետեւալ տեղեկութիւնները կը տեսնենք:

Ապրիլ 11 յունի:
Թուրքերն երէկ Գուրուչուրն ետ առին: Սերբիացիք քաղաքէն մեկնեցան թիւթե կորուստով: Մօնպարի կողմէն Ագալի մօտակայ ամբարանաց վրայ Թուրքաց երրորդ յարձակումն ետ մղուեցաւ: Ալպանիացիք մեծ կորուստ կրեցին Տէլիմարցիլի և Շօրլիմարցիլի դնդաւետներն իրենց հրամանին ներքեւ դառնուած 40 վաշտ զօրք կուրքօ զօրավարին հետ միացան և ֆիլիպէի կողմը պիտի գործէին:

Ապրիլ 11 յունի:
Նախարարական տաղմասը կը շարունակէ: Զինադուրի և հաշտութեան հաւանականութիւնն երկու հակառակ հասանք արտադրեց նախարարաց մէջ: Մէկ մասը կը յայտնէ թէ յարձակողական գործողութեան մ'ակնկալելու ժամանակն չանցած է: Միւս մասը կ'ուզէ որ յիշատակութիւնը անմիջապէս սկսին: Նախարարութեան դուրս ալ վէճը ստատիկ է: Կառավարութիւնն հալիւ կրնայ ժողովրդական զգացումը զսկսել: Կը հաւատան թէ նախարարութիւնն Անգլիոյ, Թուրքիոյ և կամ ուրիշ տէրութեան մը կողմէ խօսք տանու վրայ է թէ՛ Պոլսոյ Սեծ ժողովրդաց արուելիք շարժանքուն համար թէ՛ շարժանքներ պիտի ստանան:

Ապրիլ 12 յունի:
Պալքարայի մէջ Նիշի անձնատուութիւնը կը տեսն: Երէկ իրիկուն քաղաքը լուսավառեցաւ: Վիլհելմի նուազերը օգոթիւն մը արուեցաւ: Նախկին իշխանութեան և Ռուսաց հիւսպատուին: Սերբիացիք 130 թնդանոթ տան, 30000 հատ ալ տակէն լցուող հրացան գտան:

քաղաքին մէջ: Օտմ. պաշտպան զօրքն՝ որ 3000 է բաղկացեալ էր, վեց օր զիւրազանաբար զխնայարեց, և յետոյ անձնատուր ըլլալու պարտաւորեցաւ:

Արդին 12 յունվ.

Գերմանական Նորա-Տայգէ ֆայթունի լրագիրը կըսէ թէ հաշտութեան բանակացութիւնները զիւրացնելու համար պէտք է որ Բ. Գոռն Արքիմանուպոլիսն ու Կարինը պարպէ:

Չէրնովց 15 յունվ.

Թուրքաց վերջին ծանր պարտութեանց պատճառը զլրատուարայն կանոնաւոր հետազոտութեանց զրոյթիւնն մը չունէ. նախին է՝ հեծելազօրքին նուազ ըլլալուն պատճառաւ, որով թշնամույն չարժու՞ ներքէն բոլորովին անծանօթ էին:

Բեդրսպուրկ 15 յունվ.

Օտար երկիրներու մէջ տարածուած լուրերուն հակառակ՝ Ալէքսանդր կայսեր անողջութիւնը զոհացուցիչ վիճակի մէջ է: Նորին Կ. Վեհափառութիւնը վայրկեան մը չդադրեցուց իւր զբաղմունքն և ընդունելութիւնները:

Բեդրսպուրկ 15 յունվ.

Միքայէլ մեծ դուքսին յունվ. 12 թիւ. ւականաւ մէկ հեռագիրը կը ծանուցանէ թէ Լորիս Մէլիքովի հեծելազօրքաց մէկ գունդը Տրասպոլցի ճանրուն վրայ Թուրքաց զօրադուռը մը վաներէ մինչև Քիւր — Տաղ, և 100 զերի, զրօշակ մ'ը բազում տւար առեր է: Յետեւոր 9 էն 'ի վեր Կարնոյ պաշարումը կատարեալ է:

Հիւսիսային Գերմանական Կաղէթ լը. րադիրն անգլիական Մորնինկ Ասովէր-թայզը լրագիրն ստոյգ ասելու է ստացած հեռագրէ լուրը կը հրատարակէ:

Բեդրսպուրկի մէջ լրջարար կը խորհուի Ռուսական ծովային զօրութեան կեդրոնը Քրոնշթատին Սև ծով փոխադրել, որովհետև Քրոնշթատին նաւահանգիստը անբարեկամ վեց ամիսը ստույցներով զոյււած է: Վոսիորի և Գարդանելի նեղուցներուն Ռուսական նաւատորմին առջև բացուած անտարակուսելի նկատելով, կը հարցուի թէ վերջիւեալ նպատակին աւանդին տակ յարմարապէս պատասխանելիք նաւահանգիստներն որոնք են Սև ծովու մէջ: Մորնինկ Ասովէր-թայզը թիւրթակիցը կը կարծէ որ Ալէքսանդրով Կէրչի և Դանուբի բերքին մօտ ընտրուելիք ուրիշ կէտի մը հետք զլրատուր կայարան պիտի ըլլայ պատերազմական նաւուց: Ասիկցի զատ Ռուսիա մեծ նաւահանգիստ մը պիտի ընէ Պաթումն ալ, որոյ Ռուսաց ձեռքն անցնելն ալ անտարակուսելի կը համարուի:

Վիեննայէն դադրական Էսթաֆէթ լրագիրն ուղղեալ հեռագիր մը հետեւեալ լուրը կուտայ:

Ռուսաց զինուորական կուսակցութիւնը ամեն Զանք 'ի զօրծ կը զնէ զինադուրին կնքմանն արգելք ըլլալու համար Սոյն Զանք օգնական է նաև. Վիեննայի զինուորական կուսակցութիւնն, որ իւր երկրակալական յայտերն 'ի դերեւ ելնելու վտանգի մէջ կը տեսնէ, եթէ երկու պատերազմիցայ մէջ ուղղակի հաշտութիւն մ'անմիջապէս կնքուի:

Պալքանի հարաւարկողը ձեռք բերուած վերջին յաղթութիւնը՝ փոխանակ զփառութիւններն հարկելու՝ աւելի մեծցուցին, որովհետև աւելի ամրապնդեցին Բեդրսպուրկի մէջ այն կուսակցութիւնն՝ որ Կ. Պոլսոյ մէջ միայն կուզէ կատարել հաշտութեան բանակցութիւնները:

Պրիւսիէի Ռուսական Նօս լրագիրն հետեւեալ ուղղութեան արժանի յայտարարութիւնը կընէ:

«Ռուսիա իւր ըրած զոհողութեանց արժանաւոր փոխարինութիւնն ստանալու և իւր սրտապանած մարդկութեան մեծ ծառի չափով վերջնական ապահովութիւնը ձեռք բերելու մտադիր ըլլալովն հանդերձ՝ Օսմանեան կայսրութիւնը ջրն ջրելու դիտաւորութիւն չունի. վասն զի անոր կանգուն մնալն Արևելից մէջ հաւասարակշռութեան տարր մը կը համարի միշտ: Երբոր Թուրքիոյ կանգուն մնալն իւր քրիստոնեայ ժողովրդոց բարեկեցութեանն ու զարդացման հետ իրապէս կա-

րենայ համաձայնելի, Բեդրսպուրկի կառավարութիւնն առաջինը պիտի ըլլայ անոր տեղութիւնն՝ և եթէ հնար է՝ արդի քաղաքակրթութեան պահանջմանց համեմատ անոր կերպարանափոխումը զիւրացնող է:»

Վիեննայէն Սթրազպուրկի Կաղէթ լրագիրն կը գրեն թէ Լորիս Մէլիքովի ջանքերէ Կորչաքովի իշխանէն խօսք առնուելու Թուսիա տաժմանակեայ կերպիւ իսկ Կ. Պոլսը չպիտի դրուէ: Կորչաքովի իշխանը չէ ուղեր այսպիսի խոստում մը տալ, և ասոր համար է որ Կորչաք զօրավարին արագապէս Պալքաններէն անդին յառաջանալն այնպիսի երկիւղ պատճառներ է Լոնտրայի մէջ, որ Անգլիոյ կառավարութիւնը Ռուսիոյ և Թուրքիոյ մէջ ուղղակի բանակցութեանց զէմ կենալէ հրաժարելէ և մինչև իսկ խորհուրդ տուեր է Թուրքիոյ որ ուղղակի բանակցութեան մասնէ Ռուսիոյ հետ: Բայց այս բանն Անգլիոյ կողմէ նախաձեռն չէ. ընդհանրապէս՝ Վիեննայի մէջ համոզուած են թէ Անգլիա իւր քաղաքականութիւնը թողած չէ, և առիթ ձեռք ձգելուն պէս բան մը պիտի ընէ:

Բեդրսպուրկէն յունվ. 12 թուով Գերմանական Կաղէթ լրագիրն մէջ հրատարակեալ նամակ մը կըսէ թէ Ռուսիա ապահովութիւնն առեր է Անգլիոյ թէ խաղաղութեան պայմաններուն մէջ Անգլիոյ շահուն դաշնելիք բան մը չպիտի գտնուի և թէ Սփիոյ առամանգութիւնն ուղղուած ժամանակ՝ Անգլիոյ փափաքները նշկատուութեան պիտի առնուին:

Վիեննայի մէջ կըսուի թէ զինադուրի պայմանները Ռուսիա միայն պիտի որոշէ, իսկ խաղաղութեան պայմաններն Եւրոպական տէրութեանց ժողովով պիտի որոշուին:

Իտալական Իլ Թէմօ լրագիրը կը ծանուցանէ թէ քանի մը հելլենական սպաներ Վենետիկի հասեր են քանի մը զրահաւոր փրօքովներ զնելու վրայ բանակցելու պաշտօնով, և անկից Սրէցիա գնացեր են:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Բեդրսպուրկ 21 յունվ.

Աժանո Ռեօթէրի մէկ հեռագիրը կըսէ թէ ներկայ բանակցութիւններն եթէ չյաջողին, պատերազմին շարունակութեան պատասխանատուութիւնն Անգլիոյ վրայ կ'ընայ:

Վառնա 21 յունվ.

Ռուսաճուղի ուղարկութիւնը կը շարունակէ ամենայն ուժգնութեամբ: Կիրակի օրը չորս օրաց Ռուս հեծելաորտ Տօպրուճայի Բաղաքաճը գիւղաքաղաքին մօտ հետադադարութիւն մ'ընելով Եդիպատական հետեւապաշտաց հետ կուռի լուծուեցան, և 60 մարդ կորսնցնելով ետ մղուեցան:

Զինվորական զօրավարն 2000 սայլ պահանջեց Տօպրուճայի բնակիչներէն:

Պէլրատ 22 յունվ.

Պաշտօնական օրագիրն հրամանագիր մը կը հրատարակէ, որով Միլան իշխանը Արքիմանի վարչութիւնն ու օրէնքները կը հաստատէ Նիւի և այլ գրաւեալ Օսմանեան քաղաքացի և զիւրգորից մէջ:

Լոնտրա 22 յունվ.

Երեսփոխանաց ժողովին մէջ Սըր Սթաֆօրտ Նորթքոթ Պ. Շիլտէրսի պատասխանելով ըստ թէ վերջին յուլիս ամսոյ մէջ Անգլիա և այլ չեղոր տէրութիւնը խաղաղութեան հնարաւոր պայմաններուն վրայ բանակցեցան Ռուսիոյ հետ, բայց այն բանակցութիւնը մտերմական ըլլալով անհնար է այժմ անոնց վրայ անգլիկութիւն մը տալ ժողովին: Գայով Պ. Տիլքինի հարցման, Սըր Սթաֆօրթ Նորթքոթ ըստ թէ Սթաֆօրթն ուղղակի և անձամբ թաղուհւոյն զինելով, թաղուհւոյն ալ նախարարութեան հետ խորհրդակցութեամբ հետեւեալ հեռազգրը զրկելով Ռուսիոյ կայսեր:

«Սթաֆօրթն ուղղապէս ինձ զինելով չեմ կրնար անպատասխանի թողուլ: Զերանկեղծ խաղաղասիրութիւնը ձանձկնում

չեմ վարանիր այս իրողութիւնը ձեզ հաղորդել, յուսալով որ կրնաք փութացնել զինադուրի բանակցութիւններն՝ որով կըրնայ պատուաւոր խաղաղութիւն մը ձեռք բերուիլ:» (Ճախահարութիւնը):

Սըր Սթաֆօրտ Նորթքոթ յանձն չառաւ Սթաֆօրթի նամակը ժողովին հաղորդել, ուղղակի և անձնական ըլլալուն պատճառաւ:

Բեդրսպուրկ 22 յունվ.

Մեծ զրգուութիւն կայ Անգլիոյ զէմ Լրագիրը բուռն յօգուածներ կը գրեն Անգլիոյ աշխարհավարութեան՝ ինչպէս նաև կառավարութեան անդամաց ունեց զէմ:

Աթէնք 22 յունվ.

Նախարարական խորհուրդէ մ'ետեւ, որ քանի մը ժամ տեւեց, նախարարը չը համաձայնելով հրաժարական տուին:

Թաղուհւոյն այսօր երեսփոխանական ժողովոյ նախագահ Պ. Ալֆրէնսը կուշեց: Կարծիք կայ թէ Պ. Քուստուստուրոս նոր նախարարութիւն մը պիտի կազմէ:

Փարիզ 22 յունվ.

Այլ և այլ մայրաքաղաքներէ եկած հեռագիրը կը ծանուցանեն թէ Եւրոպական տէրութեանց կառավարութիւնները դեռ չեն իմացած Ռուսիոյ խաղաղական պայմանները:

Լոնտրա 22 յունվ.

Խորհրդարանը մեծ յուզման մէջ է: Կառավարութիւնը քաջալերեալ կերեւի, բայց չուզեր Արեւելեան գործոց վրայ վիճաբանութեան մտնել:

Լոնտրա 22 յունվ.

Թաղուհւոյն պատգամադրին ի պատասխան ներկայացեալ ուղերձին վերաբերեալ վիճաբանութիւններն ի վեր հասարակաց կարծեաց զրգուութիւնը նուազեցաւ:

Ռուսիոյ առաջարկած խաղաղութեան պայմաններն իմանալու կ'ապաստուի:

Ընդդիմադիր կուսակցութիւնը խնդիրներ առաջարկեց զիտնալու համար թէ Անգլիոյ կառավարութիւնը ներկայ պարագայից մէջ Յունաստանի վրայ ձեռն չու՞մ կը բանեցնէ: Կառավարութիւնը մինչև ցարդ յանձն չառաւ այս խնդրոյ վերաբերեալ զրոյթիւններն երեսան հանել:

Երեսփոխանաց ժողովն հիմա ներքին զօրծերով կ'ըզադի: Պ. Կլաուդիօն իւր Հալարանի բնակարանը գնաց:

Երկիրն համոզուած է որ անգլիական կառավարութիւնը չպիտի միջամտէ՝ եթէ Թուրքիա Պալքանիոյ համար զոհացուցիչ կարգադրութիւն մը պարունակող բանաւոր պայմաններ չընդունի:

Ընդդիմադիր կուսակցութեան զլրատուր անգամ Ռօպէթ—Լօլ երեսփոխանը նամակ մը գրելով կարծիք կը յայտնէ թէ անգլիական շահերը պիտանդի չեն երթարկիր՝ եթէ Ռուսիա առամանակեայ կերպիւ Կ. Պոլսը գրաւէ: Կառավարութեան լուծութիւնն ու անգործութիւնը կարգաբանցեն այս կարծիքը թէ այս տեսակ գրաւում մը թիւյ պիտի արուի՝ եթէ զիմադրութենէ կամ յապաղումներէ գրգռի:

Լոնտրա 22 յունվ.

Այս իրիկուն երեսփոխանաց ժողովին մէջ կառավարութիւնը Ռուսաց Կէլիպօլիսի վրայ երթալը ծանուցանող հեռագրաց նկատմամբ եղած հարցմանց 'ի պատասխան ըստ թէ այս մասին վաւերական տեղեկութիւններ չունի:

Ռեբի հարցմանց պատասխանելով նախարարը ըսին թէ Սթաֆօրթ խաղաղութեան նկատմամբ ուղղակի թաղուհւոյն զինելով, թաղուհւոյն իւր նախարարաց խորհուրդով այն իրողութիւնը Ռուսիոյ կայսեր հաղորդած էր՝ ըսելով թէ խաղաղութեան համար կայսեր ունեցած փափաքը զիտնալով՝ կը յուսար որ այս հրաւերը զինադադար մը և պատուաւոր հաշտութիւն մը կնքուի գործը կը փութացնէ:

Նախարարաց այս ծանուցումը ծափահարութիւններով ընդունուեցաւ: Թաղուհւոյն առ Ռուսաց կայսրն ուղղած հեռագրին պատճէնը ժողովին հաղորդուեցաւ՝ նախարարաց յանձնարարութեամբը գրուած ըլլալուն համար: Բայց Սթաֆօրթին հեռագրոյն և Ռուսիոյ կայսեր առ թաղուհւոյն զրկած պատասխանին

պատճէնները երեսան չեղան՝ առանձնական նկատուելով:

Անգլիոյ Կապիտալ տետրալին հրատարակեցաւ, բայց խաղաղութեան պայմաններուն նկատմամբ տէրութեանց մէջ փոխանակեալ դադունի՝ թիւթակցութիւնները չարունակելի:

Արտաքին գործոց նախարար Լորտ Տէրպի, որ հիւանդ էր, Լորտերուն ժողովին մէջ իւր տեղը նստիլ սկսաւ, բայց մինչև ցարդ խնդիր մը չառաջարկուեցաւ իրեն:

Բեդրսպուրկ 23 յունվ.

Բեդրսպուրկի փառնալը կըսէ թէ՝ երբոր խաղաղութեան բանակցութիւնները չյաջողին, պատասխանատուութիւնն Անգլիոյ վրայ պիտի ընայ:

Լոնտրա 25 յունվ.

Այսօր նախարարաց արտաքին կարգի խորհուրդ մ'եղաւ:

Փարիզ 25 յունվ.

Մերակուսի ժողովին մէջ այսօր անփոփոխելի անգամայ մ'ընտրութիւն կատարուելով, ձախակողմանց ընտրելի Պ. Վլքթոր Լեֆրան 129, և աջակողմանց ընտրելի Տըքազ դուքան 128 քուէ չահեցան, հետեւաբար ընտրութիւնն երկրորդ քուէարկութեան մնաց, որ վաղը պիտի կատարի:

Լոնտրա 23 յունվ.

Օտմ. Քօնս.	9 1/8
Փոլս.	1865 9 3/8
»	1869 8 7/8
»	1871 34
»	1872 13 1/2
»	1873 8 7/8
»	1874 54
Անգլ. Քօնս.	95 5/16

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մայրաքաղաքին Թուրք լրագրաց մէջ հետեւեալ պաշտօնական յայտարարութիւնը կը տեսնուի:

«Կայսերական կառավարութիւնն իմացաւ թէ թշնամույն Ագրիանուպօլիս հասնելուն պատճառաւ այլ և այլ զրոյցներ կը պաշարին մայրաքաղաքին ժողովրդեան մէջ:

«Ստոյգ է արգարեւ որ թշնամին մինչև Ագրիանուպօլիս հասաւ՝ բայց կայսերական կառավարութիւնը պաշարաւոր պահանջած ամեն միջոցները փութալանութեամբ և արագապէս ձեռք տանելու կ'ըզադի:

«Ամեն նշաններէ կը տեսնուի որ խաղաղութիւնը մօտ է: Ռուսիա՝ խաղաղութիւն ընելու հաճութիւն տալով, կայսերական կառավարութիւնը վերջին օրերս երկու լիաջոր երեսփոխան զրկեց Գըլանլըք՝ Ռուսաց ընդհանուր հրամանատարին քով, և բանակցութիւնը սկսան:

«Սակայն, եթէ պատերազմը շարունակել հարկ ըլլայ, կառավարութիւնը մինչև ցյետին կէտ զիմադրելու մտադրութեամբ ռազմագիտական կէտերը պաշտպանողական հզօր վիճակի մը մէջ գնելու համար պէտք եղած պատշաճութիւններն ամբողջացնելու կաշխատի գիշեր ցերեկ:

«Արդ ամեն ժամանակէ աւելի կառավարութեան պարտքն է այս արտաքին կարգի ծանր պարագայից մէջ մայրաքաղաքս ապահովութեան ու խաղաղութեան մէջ պահել:

«Ժողովուրդն անձնուէր փութով պէտք է աջակցի կառավարութեան ջանից՝ իւր խոհանարան փորձաւորով, և ամեն մարդ իւր գործին զրադի խաղաղութեամբ, բարեկարգութեամբ ու հանգարտութեան անփորձով պահելու հոգ տանելով, վասն զի այսպիսի ժամանակներու մէջ կը գլուխուրդն տէրութեան և հայրենեաց դաւաճան չարամիտ անձինք, որք կը ջանան սարսափ սերմանել ժողովրդեան մէջ և անոր վատահալութիւնը կտրել, սրպէս զի օգուտ քա-

ԱՐԻՏԵՐԻ ՄԱՐԲԻՉՈՒՆԻՆ

ՀԵՂԻՆԱԿ

ՏԵՂԵՐԻՆԻ

Թարգմանեց իսկ Գրգորյան Պետրոս

Սոյն գեղեցիկ վիպասանութեան, որ միայն երկու հատորէ կը բաղկանայ, երկրորդ հատորն ալ իզմիրէն հասած ըլլալով, կը ծախուի Եֆէնի ճամբի Ձիւղնկիրէր ճատտէսի թիւ 2 Ս. Ղ. և Եղմանեան գրատունը և այլ գրավաճառաց քով: Գին 2 ֆրանք:

ՄԱՐԻՈՆ ՏԵՂԵՐԻՆԻ ԽՈՍՏԱՎԱՆԱՆԻՐ

ԿԱՄ

ՊԱՏՄԱՎԱՆ ՏԱՐՔԱՆԻՐ

Հեղինակ Էմիլ Զ. Մարգար

Թարգմանեց Գր. Ձիւղնկիր

Սոյն նշանաւոր վէպին Հայերէն թարգմանութեան Գ. հատորն ալ Պոլիս հասած ըլլալով, կը ծախուի Եֆէնի ճամբի Ձիւղնկիրէր ճատտէսի թիւ 2 Ս. Ղ. և Եղմանեան գրատունը. և ուրիշ գրավաճառաց քով: Գին 2 ֆր. Ամբողջ գործը չորս կամ հինգ հատորէ պիտի բաղկանայ:

ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԿԶԶԻ

ԸՆԿԵՑԻՆ ԽՈՐՀՐԴ

Ժիւլ վէրն անուանի հեղինակին սոյն հետաքրքրաշարժ և հրահանգիչ գործին երկրորդ հատորն ալ իզմիրէն հասած ըլլալով, կը ծախուի Եֆէնի ճամբի Ձիւղնկիրէր ճատտէսի թիւ 2 Ս. Ղ. և Եղմանեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով: Գին 2 ֆր.

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵՆ

ԱՌԱՋԻՆ ՏԵՐԵՐԻՐ

Քերթում, Մահ Սպարտայ, Ճառ, Այլ և այլ, Յանուար:

Հեղինակին իւր ինչ ինչ ոտանաւոր և արձակ գրութեան լամարդիին Գաղղիայի բանաստեղծին Սպարտայ ճառն գրաւոր տաղաչափեալ թարգմանութիւնն ամբողջ է սոյն գրքը: Գին 1 ֆրանկ:

Գին 1 ֆրանկ թուղթ

ԺՕՁԵՑ ՊԱՍՏԱՐ

Հեղինակ

ԱԼԲԵՐՏ ՏԵՐԵՐԻՐ

Թարգմանեց Գ. Եղմանեան

Աշխարհածանօթ հեղինակին նըշանաւոր պատմական վէպերէն մին և զոգ սոյն գործին թարգմանութեան եօթներորդ հատորը Պոլիս հասած ըլլալով, արդէն բաժանորդներէն կը խնդրուի որ իրենց անդորրագիրը ներկայացնեն Ս. Ղ. և Եղմանեան գրատունը Եֆէնի-ճամբի Ձիւղնկիրէր ճատտէսի թիւ 2, և նոյն հատորն ստանան: Այս առթիւ կը ծանուցուի թէ սոյն հրատարակութեան բաժանորդագրութիւնը դոյողած է:

Կը ծախուի վերոյիշեալ գրատունը և ուրիշ գրավաճառաց քով: Գին մէկ հատորին 2 ֆրանք 25 սանթիմ:

Ամբողջ գործը ութ հատորէ պիտի բաղկանայ:

ՁԱՒԱՆ ԵՒ ՓԱՌՆԱԿ Ա.

Գրեց Երեմիան Գարրիէլ Պատիմեան

Ընթերցասէր ազգային, որ անշուշտ ազգային տաղանդաւոր հեղինակին լեռնայանը և այլ գործերը կը յիշեն, մեծ հաճութեամբ պիտի կարդան այս նոր գործը, որ դարձեալ մեր ազգային պատմութենէն առնուած է:

Կը ծախուի Ս. Ղ. և Եղմանեան գրատունը Եֆէնի ճամբի Ձիւղնկիրէր ճատտէսի թիւ 2, և ուրիշ գրավաճառաց քով: Գին 1 ֆր. 50 սանթիմ:



ՇԻՐԲԵԹԻ ԽԱՅՐԻԷԻ

ՇՈՐԵՆԱԽՆԵՐՈՒՆ ԵՐԹԵԻՆԿԻ ՓԱՄԵՐԸ

1878 ՅՈՒՆԻՍ 3 ԵՐԵՎԱՆԻ ՕՐԻՆ ՍԿԵՆԱ

ՄԻՆՁԵՒ ԹՈՒՆՎԱՐ 31

ԲՈՍՓՈՐԱՆ ԻՋՆՈՂ ՇՈՐԵՆԱԽՆԵՐԸ

Table with 3 columns: Ժամ (Time), Երեւոյն (Place), Թիւ (Number). Rows include times like 2 15, 3, 4 30, 6 30, 8, 10 and locations like Եֆէնի ճամբի Ձիւղնկիրէր, Եղմանեան գրատունը, Եֆէնի ճամբի Ձիւղնկիրէր.

ԱՐԻՏԵՐԻ ԶԵՂԵՒ

Table with 3 columns: Ժամ (Time), Երեւոյն (Place), Թիւ (Number). Rows include times like 2, 2 30, 3 15, 4, 4 45, 7 30, 10 30 and locations like Եֆէնի ճամբի Ձիւղնկիրէր, Եղմանեան գրատունը, Եֆէնի ճամբի Ձիւղնկիրէր.

ԱՐԻՏԵՐԻ ԶԵՂԵՒ

Table with 3 columns: Ժամ (Time), Երեւոյն (Place), Թիւ (Number). Rows include times like 2 30, 2 30, 3 15, 4 15, 10 15 and locations like Եֆէնի ճամբի Ձիւղնկիրէր, Եղմանեան գրատունը, Եֆէնի ճամբի Ձիւղնկիրէր.

ԿԱՄՈՒՐՔԻՆ ԵՒՆՈՂ ՇՈՐԵՆԱԽՆԵՐԸ

Երեւոյն (Place)

Table with 3 columns: Ժամ (Time), Երեւոյն (Place), Թիւ (Number). Rows include times like 3 and locations like Եֆէնի ճամբի Ձիւղնկիրէր, Եղմանեան գրատունը, Եֆէնի ճամբի Ձիւղնկիրէր.



ՋՐԶԱՆ

Մեծերիկայի ջրհանները մեծ և վեր, երկաթէ հաստաւոր լողող, վահանաւոր թէ ջրհեղձներու և թէ խորունկ հորերու համար ամեն գինով կը ծախուի, Կ. Պոլիս Գաղղիայի Միւնստեան և Եֆէնի ճամբի Ձիւղնկիրէր մաղաղան:



ԿԱՐԻ ԳՈՐԾԻՐ

Փոքր ավանդերու կոշուած ձեռքով գործող ու անքակ կար կարող գործիքը ամեն տեսակ կար մեծ գին:

Բաժնեմէր կը կարէ ու գինն ալ ամեն է, երաշխաւորութեամբ կը տրուի, աւարտածները կը շտկուի ու կարելի չգիտողները կը արուի. կը ծախուի Կ. Պոլիս Գաղղիայի Միւնստեան և Եֆէնի ճամբի Ձիւղնկիրէր մաղաղան:



ՍՈՒԹԻՆԿ ՇԻՐՈՐ

Յայտնի է որ երաշխաւոր ծնանքէն մինչ երեք տարեկան հասակը գրեթէ շարունակ փորից աւ. փորհարութիւն, ստամոքսի անհանգստութիւն, անքուն մնալ, չլցւած զրգուծութիւն և այլն կունենան, մանաւանդ աւուս հասակը միջոցին, և այս նշաններն ներքին աղտելի կը ստատկանան ամառնաւ տաք եղանակին: Մութիւն շիրորը վերոյիշեալ դժուարութեանց ամենուն ալ աւաճը կունենալու կը բերէ, որով երաշխաւոր կը հանգչի ու կը զօրանայ, յարապարակութիւն մեծ իւր ծնողաց: Գործածողները շատ դժեմ են: Ուղղորդ կրնայ փորձել. գինն ամեն է. նորածին երաշխաւոր կաթով կը արուի, վեց ամիսէն վեր եղջիւրը երեք անգիւղ գրգռել. կը ծախուի Կ. Պոլիս Գաղղիայի Միւնստեան և Եֆէնի ճամբի Ձիւղնկիրէր մաղաղան:

Table with 3 columns: Ժամ (Time), Երեւոյն (Place), Թիւ (Number). Rows include times like 3 30, 5 30, 6 30, 8 15, 10 15, 11 10, 14 10 and locations like Եֆէնի ճամբի Ձիւղնկիրէր, Եղմանեան գրատունը, Եֆէնի ճամբի Ձիւղնկիրէր.

ԱՐԻՏԵՐԻ ԶԵՂԵՒ

Table with 3 columns: Ժամ (Time), Երեւոյն (Place), Թիւ (Number). Rows include times like 3 30, 4, 9 30, 10 15, 11 5, 14 35, 12 and locations like Եֆէնի ճամբի Ձիւղնկիրէր, Եղմանեան գրատունը, Եֆէնի ճամբի Ձիւղնկիրէր.

ԱՐԻՏԵՐԻ ԶԵՂԵՒ

Table with 3 columns: Ժամ (Time), Երեւոյն (Place), Թիւ (Number). Rows include times like 10 30, 11 5, 14 15, 14 40 and locations like Եֆէնի ճամբի Ձիւղնկիրէր, Եղմանեան գրատունը, Եֆէնի ճամբի Ձիւղնկիրէր.

ԻՍԿԱԽԻՏԱՐ ԲԱՆՈՂ ՇՈՐԵՆԱԽՆԵՐԸ

Table with 4 columns: Ժամ (Time), Երեւոյն (Place), Թիւ (Number), Թիւ (Number). Rows include times like 2, 2 30, 3, 3 30, 4, 4 30, 5, 5 30, 6, 6 30, 7 and locations like Եֆէնի ճամբի Ձիւղնկիրէր, Եղմանեան գրատունը, Եֆէնի ճամբի Ձիւղնկիրէր.

ՈՐԻՆԱԿ ԵՒ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Table with 4 columns: Ժամ (Time), Երեւոյն (Place), Թիւ (Number), Թիւ (Number). Rows include times like 2 15, 3, 3 45, 4 15, 5, 5 45, 6 15, 7 and locations like Եֆէնի ճամբի Ձիւղնկիրէր, Եղմանեան գրատունը, Եֆէնի ճամբի Ձիւղնկիրէր.

Այս լրագիրը շարաւրդ երեք անգամ չը հրատարակուի, երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը: Բաժանորդագրութեան անգիրն են Ղալաթիա Սանտրոքիար ճատտէսի թիւ 198, Նորո իսկ Մասիս խմբագրատունը:

Իսկ գաւառաց մէկ հեռուեալ հոգաբարձուաց սենեակները:

ԵՋՄԻՐ. Ստեփան աղա Տէմէնեան. ՆԻԿՈՍԻՒՄ. Խոսրով էֆ. Էսկիմեան. ՊՐՈՒՍ. Ստեփան աղա Թանկէրեան. ԹԵՐԻՐՏԱՂ. Յովակիմ աղա Ուղղուն. արգան:

ՏՐԱՊԵՐՈՒՆ. Խաչատուր աղա Նաթանեան. ԿԱՐԻՆ. Կարապետ պատուելի Ջաւահիր:

ՎԱՆ. Կարապետ աղա Նաթանեան. ՄՈՒՆ. Մկրտիչ աղա Փօթիկեան. ՆԱԿ. Մ. աղա Խաչիկեան:

ՅՈՒՆԻՍ. Ֆէրիտ աղա Ս. Ֆէրիտեան. ԵՐԵՎԱՆ. Թաղեալ աղա Բաղրատ:

ՍԻՎԻՃԱՆԱՐ. Սրբ. Տ. Բարսեղ:

Երեւոյն քաղաքներէ ստացող բոլոր լրագիրներն առանձին և հետեւեալ կը լրացուի:

ԽՈՐՀՐԴԱՎՈՐ-ՏԵՂԵՐԻՆ

Կ. Ս. ԻՍԿԱԽԻՏԱՐ

Կ. Ս. ԻՍԿԱԽԻՏԱՐ ԻՍԿԱԽԻՏԱՐ

Կ. Ս. ԻՍԿԱԽԻՏԱՐ Կ. Ս. ԻՍԿԱԽԻՏԱՐ